յանին տպարանին մեջ տպագրվեցավ 8 գիրք (1770—1792 թթ.)։ Հովհաննեսն ու իր որդին Պողոսը, 1777-ին Աստվածատուր Դպիրի տպարանին մեկ մասը գնելով, մինչև 1796 թվականը միասին աշխատեցան։ Հովհաննեսի մահեն վերջ Պողոս Արապյանը որդիներուն հետ իր գործունեությունը շարունակեց մինչև 1841 թվականը և լույս ընծայեց 150 գիրք։ 1792-ին Դումգաբուի մայր եկեղեցիին մեջ հիմնած տպարանը մինչև 1825 թվականը շարունակեց իր գոյությունը։ Հովհաննես Մյուհենտիսյանը 1840—1873 թվականներուն տպագրեց բազմաթիվ հայերեն և հունարեն գիրքեր։ Այս անձերու անունները, որոնք նշեցինք՝ XVI, XVII, XVIII և XIX դարերուն, Կ. Պոլսո մեջ գործող հայ տպարանատերերն են, չմոռանալով նաև, որ Օսմանյան կայսրության սահմաններուն մեջ Կ. Պոլսեն զատ Վան (Վարագա վանք) և Մուշ (Գլակի վանք) քաղաքներուն մեջ Մկրտիչ Խրիմյան վարդապետը (հետագայում արևմտահայերու պատրիարքը և ապա էջմիածնի կաթողիկոսը) հիմնած է տպարաններ (1855—1862 թթ.)։

Օսմանյան կայսրության սահմաններուն մեջ 1567-են մինչև 1922 թվականը Կ. Պոլսո մեջ՝ 131, իսկ գավառներու մեջ հիմնված 63 տպարաններեն լույս տեսած հայերեն լեզվով և հայատառ թուրքերենով լրագիրներու և ամսագիրներու թիվը 598 է։

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան գրադարաններու, Երևանի Ալեքսանդր Միասնիկյանի անվան գրադարանին, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին և Հայաստանի Արվեստի և Գրականության թանգարանի գրադարանին մեջ ցարդ կատարված պրպտումներու համաձայն, մինչև 1850 թվականը, այսինքն՝ 283 տարիներու ընթացքին լույս տեսած գիրքերու թիվը 525 է, որոնց 14-ը անթվակիր են։

Հայերեն ու հայատառ թուրքերեն լույս տեսած են հազարավոր կրոնական, եկեղեցական, լեզվաբանական, պատմական, աշխարհագրական, գրական (վեպ, չափածո, երգիծանք, թատերգություն), մանկավարժական, ուղեգրական, տրամաբանության, փիլիսոփայության վերաբերյալ երկեր, անթոլոգիաներ, բառարաններ, հուշագրություններ, օրացույցներ, տարեգիրքեր, դասագիրքեր՝ գրված հայ հեղինակներու կողմե, ինչպես նաև թարգմանություններ։ Օսմանյան կայսրության մեջ տպագրված հայատառ թուրքալեզու գիրքերու և ամսագրերու քանակը կը հասնի 1000-ի։ Թուրքիո պատմության և գրականության առնչությամբ մեծ կարևորություն ներկայացնող այս հրատարակություններու գերակշիռ մեկ մասը կը գտնվի Վենետիկի և Վիեննայի մատենադա-